



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 14 » հունվարի 2019 թ.

№ 1

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ ՊԵԿ կողմից կայացված մի շարք վարչական ակտեր անվավեր ճանաչելու
վերաբերյալ

ՀՀ վարչական դատարանում 2017-2018թթ-ի ընթացքում քննվել են թվով 51 դատական գործեր՝ ՀՀ ՊԵԿ կողմից կազմված՝ աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտության ստուգման ակտերն (այսուհետ՝ ՉԱ ակտեր) անվավեր ճանաչելու պահանջով (վիճարկվող ակտերով առաջադրված գումարը կազմում է 236.6 մլն. ՀՀ դրամ):

Նշված գործերի շրջանակներում ՀՀ վարչական դատարանի կողմից արդեն իսկ կայացվել են թվով 31 դատական ակտեր՝ այդ թվում նաև օրինական ուժի մեջ մտածները, որոնցից թվով 26-ը՝ ստուգման ակտերն անվավեր ճանաչելու (առաջադրված գումարը՝ 155.5 մլն. դրամ) և 5-ը՝ ներկայացված հայցերը մերժելու վերաբերյալ (առաջադրված գումարը՝ 11.3 մլն. դրամ):

ՉԱ ակտերն անվավեր ճանաչելու հիմնական պատճառը ՀՀ կառավարության 25.07.2013 թվականի թիվ 1259-Ն (մինչև 01.01.2018թ-ը գործող օրենսդրության շրջանակներում իրականացված ստուգումների մասով) և 28.09.2017 թվականի N 1214-Ն (01.01.2018թ-ից գործող օրենսդրության շրջանակներում իրականացված ստուգումների մասով) որոշումներով հաստատված կարգերով նախատեսված՝ ստուգման շրջանակներում պարտադիր կատարման ենթակա գործողությունները կատարված չլինելու, կամ դրանց վերաբերյալ նույն կարգերով նախատեսված փաստաթղթերի բացակայությունը կամ թերի լինելը, կամ ստուգման ակտերով վկայակոչված հանգամանքների վերաբերյալ ապացույցների բացակայությունն է:

Նշված գործերով դատական ներկայացուցչություն ապահովելու նպատակով ՀՀ ՊԵԿ կողմից կատարվող ծախսերը (աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ, գործուղման ծախսեր և այլն) մի քանի անգամ գերազանցում են դատական վեճերի արդյունքում ուժի մեջ թողնված ակտերով առաջադրված պարտավորության չափը, ինչը վկայում է, որ նշված գործերով դատական պաշտպանության իրականացման գործառույթը արդյունավետ չէ (Հիմք՝ ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ Ռ. Բադասյանի 13.12.2018թ-ի թիվ 11-2/[1880708]-18 զեկուցագիրը):

Ներկայումս ՀՀ վարչական դատարանում վիճարկվող ՉԱ ակտերից թվով 16-ի մասով առկա են դատական կարգով անվավեր ճանաչման վերը նշված հիմքերը, որոնց հակիրճ նկարագրությունը տրված է սույն որոշման հավելվածում:

Նկատի ունենալով վերոգրյալը, պետական միջոցների անարդյունավետ օգտագործումից խուսափելու նպատակով, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետով, 2-րդ մասով, 67-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 11 հունիսի 2018 թվականի N 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 14-րդ ենթակետով


ՈՐՈՇԵՑԻ

1. Անվավեր ճանաչել սույն որոշման հավելվածում նշված վարչական ակտերը:

2. Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ պարբերության՝ սույն որոշումը հասցեատերերին իրազեկելու նպատակով, հրապարակել ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք էջում:



1/14/2019

X 

VERIFIED OCSP 1/14/2019 20:02:49 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

Դ. ԱՆԱՆՅԱՆ

ՑԱՆԿ

Անվավեր ճանաչման ենթակա աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ
սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ
ներկայացնելու ճշտության վարչական ակտերի

Գ/Գ	ՀՎՀՀ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՍՏՈՒԳՄԱՆ ԱԿՏԻ ՀԱՄԱՐԸ	ՍՏՈՒԳՄԱՆ ԱԿՏԻ ԱՄՍԱԹԻՎԸ	ԱՆՎԱԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ
1	66818212	Հայկասար Գրիգորյան Շավարշի	4100052	03.04.2018	ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունից 24.01.2018թ. թիվ 53-495-18 գրությամբ ստացվել են տեղեկություններ վկաների ցուցմունքները, որի համաձայն իրենք աշխատել են ԱԶ-ի մոտ:28.09.2017 թվականի N 1214-Ն որոշմամբ սահմանված Հավելված 2-ի ձևաթղթով արձանագրություններ չեն կազմվել:
2	82192514	ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ	4101327	21.05.2018	ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունից 05.04.2018թ. թիվ 53-2292-18, 10.04.2018թ. թիվ 53-2358-18 գրություններով ստացվել են տեղեկություններ վկաների ցուցմունքները, որի համաձայն իրենք աշխատել են ԱԶ-ի մոտ:28.09.2017 թվականի N 1214-Ն որոշմամբ սահմանված Հավելված 2-ի ձևաթղթով արձանագրություններ չեն կազմվել:
3	75429263	Ա/Ձ Կարինե Ավետիսյան	4103215	31.07.2018	Ակտին կից նյութերում բացակայում են 1214Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված արձանագրությունները և հայտարարությունները:
4	00136516	«Ֆորսաժ Ավիա ՍՊԸ	2134977	14.08.2017	Առկա են անվավերության հիմքեր՝ ստուգման ակտի կայացման հիմքում դրված է ԱԱԾ-ի կողմից տրամադրված նյութեր, որոնցում առկա էին անհամապատասխանություններ, մինչդեռ ստուգման ժամանակ տրամադրված տեղեկությունը չեն ճշտվել և արդյունքում Դատարանի կողմից կայացվել է ի վնաս ՊԵԿ դատական ակտ
5	89150481	ա/ձ Վարդուհի Համբարյան	1110271	30.03.2017	Փաստացի աշխատանք կատարողներից չեն վերցվել հայտարարություններ, արձանագրության մեջ չեն նշվել անձնագրային տվյալները
6	01538783	«Դավիթ Երթուղային» ՍՊԸ	1110271	30.03.2017	Զի պահպանվել Կառավարության որոշմամբ սահմանված կարգը: Առկա է դատական ակտ՝ ստուգման ակտի անվավերության վերաբերյալ, որի հիմքում դրված են կարգը պահպանված չլինելու վերաբերյալ հիմնավորումներ:
7	00109274	«Ստրոյ Մաստեր Դամաֆոն» ՍՊԸ	2140404	05.05.2018	Հանձնարարագիրը հրապարկվել է ֆիզիկական անձի կողմից տրված հայտարարության հիման վրա, տնտեսվարող սուբյեկտի կողմից վիճարկվում է այն փաստը, որ նշված անձին չեն ճանաչում և նա երբևիցե Հայցվոր ընկերությունուն չի աշխատել: Հակառակը չի հիմնավորվում:

8	04424697	Արտոդետալ ՄՊԸ	2138219	26.01.2018	1. Բացակայում են 26.01.2018 թվականի թիվ 2138219 ակտում նշված ընկերությունում փաստացի աշխատանքային գործունեություն իրականացնող, սակայն համաձայն վերոնշված ակտի աշխատանքային գրավոր պայմանագիր չունեցող թիվ 5 աշխատակիցների հայտարարությունները, ինչպես նաև ստուգում իրականացնող անձանց կողմից կազմված որևէ փաստաթուղթ, որով հնարավոր կլիներ հիմնավորել, որ վերջիններիս կողմից ստուգման ակտում նշված անձանց բացատրվել են ստուգման պահին հայտարարություն տալուց հրաժարվելու նրանց իրավունքների մասին և վերջիններս հրաժարվել են հայտարարություններ տալ: 2. Վարչական վարույթի նյութերից և հայցադիմումից պարզ է դառնում, որ տնօրենի կամ փոխտնօրենի կողմից ստուգման ընթացքում չեն ներկայացվել աշխատանքային պայմանագրեր (կամ դրանց պատճենները), դրանք ընկերությունը պարտավորվել է ներկայացնել և ներկայացրել է ստուգման հաջորդ օրը՝ 22.12.2017թ.: Ճիշտ է դա հնարավորություն կտար ընկերությանը ցանկացած ամսաթիվ կազմել պայմանագրեր, սակայն փաստացի պայմանագրերը ներկայացվել են և կհանգեցնեն դատական կարգով ակտի անվավերությանը:
9	27854102	Ա/Ձ Նաիրա Խոյան	6108986	25.09.2015	Հիմք է ընդունվել ՀՀ ՖՆ իրավախախտումների հայտնաբերման և վարչական վարույթների իրականացման վարչության 24.08.2015թ-ի թիվ 13-1/910701-15 գրությունը, համաձայն որի ստուգվող ժամանակաշրջանում /07.12.2012 - 03.09.2015/ Ա/Ձ-ն ունեցել է թիվ 13 չձևակերպված աշխատող: ՊԵԿ բողոքարկման հանձնաժողովի 24.11.2015թ-ի որոշմամբ Ա/Ձ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է, հաշվի առնելով, որ հարուցված է քրեական գործ, 02.08.2018թ-ի թիվ 45/24 որոշմամբ վարչական վարույթը վերսկսվել է և Ա/Ձ-ի դիմում-բողոքը մերժվել է: Բացակայում է ՀՀ կառավարության 25.07.2013թ-ի թիվ 1259 ձևի արձանագրությունը, Ա/Ձ-ի հայտարարությունը և թիվ 13 աշխատողների բացատրությունները: Արձանագրվել է նաև արտոնագրային վճարի գծով խախտում: Այս մասով հայցվորի կողմից ներկայացվել է փաստարկ, այն մասին, որ ակտում նշված ժամանակահատվածում վերջինս չի գործել, իսկ հակառակի վերաբերյալ ապացույց առկա չէ:

10	82519784	Ա/Ձ Մուշեղ Առաքելյան	4104393	17.08.2018	Արձանագրվել է թիվ 2 չձևակերպված աշխատող /խոհարար/: 27.07.2018թ-ին կազմվել է ՀՀ կառավարության 28.09.2017թ-ի թիվ 1214-Ն ձևի արձանագրություն, որը ստորագրված է Ա/Ձ-ի կողմից: Առկա է Ա/Ձ-ի գրավոր հայտարարությունը, որով հայտնում է, որ ակտում արձանագրված Ասքանազ Կարապետյանին չի ճանաչում և նրա վերաբերյալ տեղեկություններ չի կարող ներկայացնել, իսկ 2-րդ աշխատող՝ Նազիկ Խնկոյանը աշխատում է 14.06.2018թ-ից, նրա համար հարկային մարմին ներկայացվել է գրանցման հայտ, սակայն թյուրիմացաբար հայտում աշխատանքային ավարտ է նշվել 14.06.2018թ: 18.06.2018թ-ին գրանցման հայտում կատարել է համապատասխան ճշտումներ: Առկա է Նազիկ Խնկոյանի 04.07.2018թ-ի գրավոր հայտարարությունը, որով հայտնում է, որ աշխատում է Ա/Ձ-ի մոտ 14.06.2018թ-ից, սակայն կնքված գրավոր պայմանագիր չունի:
11	02258536	ՄՕԶՕ ՍՊԸ	4103881	01.08.2018	Ակտով հայտնաբերվել է և ՀՀ խախտում և ՉԱ: ՉԱ-ներից հայտարարություններ չեն վերցվել, բացակայում են անձնագրային տվյալները, գործատուն բացատրություն չի ներկայացրել: Չեն պահպանվել թիվ 1214-Ն Կարգի պահանջները,
12	04215389	Բելովո ՍՊԸ	2140919	09.01.2018	Ստուգմանը չի մասնակցել տնօրենը, հայտարարություններ չեն վերցվել, անձնագրային տվյալները բացակայում են : Հայտնաբերված 11 ՉԱ- ները դատարանում պնդում էին, որ այլ կազմ աշխատակիցներ են: Հի պահպանվել թիվ 1259-Ն Կարգի պահանջները:
13	00853273	Բենա Թրեյդ ՍՊԸ	1103716	31.05.2013	Հի պահպանվել ՀՀ Կառավարության 1259-Ն որոշմամբ հաստատված Կարգի պահանջները, ակտը կայացվել է 3-րդ անձից ստացված տեղեկության հիման վրա միայն:
14	06940548	Ռուդել ՍՊԸ	1111197	06.10.2017	Վճռով հայցը բավարարվել է: ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: Բացակայում է ՀՀ Կառավարության 1259-Ն որոշմամբ հաստատված Կարգով սահմանված արձանագրությունը, ինչպես նաև առկա չեն հայտարարություններ:
15	04455941	Ման Տուր ՍՊԸ	1111107	28.08.2017	Վճռով հայցը բավարարվել է: ՊԵԿ-ի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք: Ստուգումը իրականացվել է ԱԱԾ-ի կողմից տրված տեղեկությունների հիման վրա: Բացակայում է չձևակերպված աշխատողների փոխկապակցվածությունը Ընկերության հետ: ՉԱ-ի մասով բացակայում են հայտարարությունները և հայտարարություն տալուց հրաժարվելու վերաբերյալ որևէ ապացույց: Սույն ակտով արձանագրվել է նաև օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որը նույնպես, որը նույնպես հիմնավորված չէ, քանի որ առկա չէ որևէ ապացույց, հետևաբար հնարավոր չէ հիմնավորել, որ մեքենաները շահագործվել են Ընկերության կողմից:

16	00806046	Սպիտակ Լավանդա ՍՊԸ	2137947	18.10.2017	Հայտարարություններ չեն վերցվել: Սույն ակտով արձանագրվել է նաև օրենքով սահմանված ելակետային տվյալների և գործակիցների ճշտության ստուգում, որը նույնպես հիմնավորված չէ, քանի որ բացակայում է ապացույցը, թե ինչ կարգով են չափագրումը կատարել: Բացակայում է արձանագրություն չափագրման եղանակի վերաբերյալ: ինչի հետևանքով կասկածի տակ է դրվում ակտով արձանագրված ելակետային տվյալների չափը:
----	----------	--------------------------	---------	------------	---